39.00	Թափոնների վնասազերծում և այլ մշակում	
39.00.0	Թափոնների վնասազերծում և այլ մշակում	79
41	Շենքերի շինարարություն	
41.1	Կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ	44
41.10	Կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ	44
41.10.0	Կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ	44
41.2	Բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն	

41.20	Բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն	
41.20.1	Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարություն	44
41.20.2	Բնակելի և ոչ բնակելի շենքերի հիմնական նորոգում	44
41.20.3	Բնակելի և ոչ բնակելի շենքերի ընթացիկ նորոգում	44
42	Քաղաքացիական շինարարություն	
42.1	Ճանապարհների և երկաթուղիների շինարարություն	
42.11	Ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարություն	
42.11.0	Ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարություն	44
42.12	Երկաթուղիների և մետրոյի շինարարություն	
42.12.0	Երկաթուղիների և մետրոյի շինարարություն	53
42.13	Կամուրջների և թունելների շինարարություն	
42.13.0	Կամուրջների և թունելների շինարարություն	53
42.2	Կոմունալ կառույցների շինարարություն	
42.21	Ջրային տնտեսության կառույցների շինարարություն	
42.21.0	Ջրային տնտեսության կառույցների շինարարություն	44
42.22	Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի շինարարություն	
42.22.1	Էլեկտրակայանների և էլեկտրահաղորդման համակարգերի շինարարություն	44
42.22.2	Հեռահաղորդակցական կապի կառույցների շինարարություն	44
42.9	Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն	
42.91	Ջրային կառույցների շինարարություն	
42.91.0	Ջրային կառույցների շինարարություն	53
42.99	Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	
42.99.1	Սպորտային կառույցների շինարարություն	44
42.99.2	Գազամատակարարման կառույցների շինարարություն	44
42.99.9	Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	44
43	Մասնագիտացված շինարարական գործունեություն	
43.1	Շենքերի քանդում, շինարարական հրապարակի նախապատրաստում	
43.11	Շենքերի կազմատում և քանդում	
43.11.0	Շենքերի կազմատում և քանդում	26
43.12	Շինարարական հրապարակի նախապատրաստում	
43.12.1	Շինարարական հրապարակի նախապատրաստում	26
43.12.2	Պայթեցման աշխատանքներ	33
43.12.3	Տարածքի նախապատրաստում՝ հանքարդյունահանման աշխատանքների համար	33
43.13	Հետախուզական հորատում և գայլիկոնում	
43.13.0	Հետախուզական հորատում և գայլիկոնում	33
43.2	Էլեկտրական, ջրամատակարարման և այլ ճարտարագիտական համակարգերի հավաքակցման աշխատանքներ	

43.21	Էլեկտրական համակարգերի հավաքակցում	
43.21.1	Էլեկտրական համակարգերի հավաքակցում	26
43.21.2	Հեռահաղորդակցական համակարգերի հավաքակցում	26
43.22	Ջրամատակարարման, ջեռուցման, օդի լավորակման համակարգերի հավաքակցում	
43.22.1	Ջրամատակարարման համակարգերի հավաքակցում	26
43.22.2	Ջեռուցման, գազամատակարարման, օդի լավորակման համակարգերի հավաքակցում	26
43.29	Այլ ճարտարագիտական սարքավորանքի տեղադրում	
43.29.1	Վերելակների և այլ ճարտարագիտական սարքավորանքի տեղադրում	33
43.29.9	Վերելակների և այլ ճարտարագիտական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում	33
43.3	Շինարարության ավարտական փուլի աշխատանքներ	
43.31	Սվաղի աշխատանքներ	
43.31.0	Սվաղի աշխատանքներ	33
43.32	Ատաղձագործական աշխատանքներ	
43.32.0	Ատաղձագործական աշխատանքներ	33
43.33	Հատակների ծածկապատում և պատերի երեսպատում	
43.33.0	Հատակների ծածկապատում և պատերի երեսպատում	33
43.34	Ներկարարական և ապակեպատման աշխատանքներ	
43.34.0	Ներկարարական և ապակեպատման աշխատանքներ	33
43.39	Շինարարության ավարտական փուլի այլ աշխատանքներ	
43.39.0	Շինարարության ավարտական փուլի այլ աշխատանքներ	33
43.9	Այլ մասնագիտացված շինարարական գործունեություն	
43.91	Տանիքաձածկման աշխատանքներ	
43.91.0	Տանիքաձածկման աշխատանքներ	33
43.99	Այլ մասնագիտացված շինարարական գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	
43.99.1	Հիմնադրում՝ ներառյալ ցցերի խփումը	33
43.99.2	Քարե և աղյուսե շարվածքի շարում	33
43.99.3	Շենքերի ապախոնավացում, տանիքաձածկերի անջրանցիկության ապահովում	33
43.99.4	Շենքերի ճակատների հարդարում	33
43.99.5	Շինարարական սարքավորանքի վարձակալում՝ սպասարկող անձնակազմով	26
43.99.9	Այլ մասնագիտացված շինարարական գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	33
51	Օդային տրանսպորտի գործունեություն	
51.1	Օդային մարդատար տրանսպորտի գործունեություն	
51.10	Օդային ուղևորափոխադրումներ	
51.10.0	Օդային ուղևորափոխադրումներ	40
51.2	Օդային բեռնատար և տիեզերական տրանսպորտի գործունեություն	
51.21	Օդային բեռնափոխադրումներ	
51.21.0	Օդային բեռնափոխադրումներ	44

51.22	Տիեզերական տրանսպորտի գործունեություն	
51.22.0	Տիեզերական տրանսպորտի գործունեություն	44
55	Կացության կազմակերպում	
55.1	Հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ	
55.10	Հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ	
55.10.0	Հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ	33
55.2	Այլ բնակատեղերի տրամադրման ծառայություններ՝ հանգստյան և տոնական օրերին հանգստի կազմակերպման համար	
55.20	Այլ բնակատեղերի տրամադրման ծառայություններ՝ հանգստյան և տոնական օրերին հանգստի կազմակերպման համար	
55.20.1	Երիտասարդական ճամբարների և լեռնային բազաների գործունեություն	33
55.20.2	Մանկական ճամբարների գործունեություն	40
55.20.3	Հանգստյան տների գործունեություն	33
55.20.9	Այլ բնակատեղերի տրամադրման ծառայություններ	37
55.3	Քենփինգների (ճամբարների), ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների կայանատեղերի տրամադրման ծառայություններ	
55.30	Քենփինգների (ճամբարների), ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների կայանատեղերի տրամադրման ծառայություններ	
55.30.0	Քենփինգների (ճամբարների), ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների կայանատեղերի տրամադրման ծառայություններ	33
55.9	Այլ հանգրվանների կազմակերպում	
55.90	Այլ հանգրվանների կազմակերպում	
55.90.0	Այլ հանգրվանների կազմակերպում	37
58	Հրատարակչական գործ	
58.1	Գրքերի, պարբերական հրատարակությունների հրատարակում և այլ հրատարակչական գործունեություն	
58.11	Գրքերի հրատարակություն	
58.11.0	Գրքերի հրատարակություն	23
58.12	Տեղեկագրքերի և հասցեագրքերի հրատարակություն	
58.12.0	Տեղեկագրքերի և հասցեագրքերի հրատարակություն	23
58.13	Թերթերի հրատարակություն	
58.13.0	Թերթերի հրատարակություն	23
58.14	Ամսագրերի և պարբերականների հրատարակություն	
58.14.0	Ամսագրերի և պարբերականների հրատարակություն	26
58.19	Հրատարակչական այլ գործունեություն	
58.19.0	Հրատարակչական այլ գործունեություն	23
58.2	Համակարգչային ծրագրերի հրատարակություն	
58.21	Համակարգչային խաղերի հրատարակություն	

58.21.0	Համակարգչային խաղերի հրատարակություն	26
58.29	Այլ համակարգչային ծրագրերի հրատարակություն	
58.29.0	Այլ համակարգչային ծրագրերի հրատարակություն	26
61	Հեռահաղորդակցություն	
61.1	Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ	
61.10	Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ	
61.10.1	Հեռախոսային ցանցի ծառայություններ	28
61.10.2	Հեռագրական կապի ծառայություններ	28
61.10.3	Ինտերնետ հասանելիության ծառայություններ լարային կապի միջոցով	28
61.10.9	Այլ լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ	28
61.2	Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ	
61.20	Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ	
61.20.1	Բջջային հեռախոսակապի ծառայություններ	30
61.20.2	Ռադիոալիքային (փեյջինգային) կապի ծառայություններ	30
61.20.3	Շառավղային գործողության կապի ծառայություններ	30
61.20.4	Ինտերնետ հասանելիության ծառայություններ անլար կապի միջոցով	30
61.20.9	Այլ անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ	30
61.3	Արբանյակային կապի ծառայություններ	
61.30	Արբանյակային կապի ծառայություններ	
61.30.1	Արբանյակային կապի ծառայություններ	30
61.30.2	Ինտերնետ հասանելիության ծառայություններ արբանյակային կապի միջոցով	30
61.9	Հեռահաղորդակցական կապի այլ տեսակներ	
61.90	Հեռահաղորդակցական կապի այլ տեսակներ	
61.90.0	Հեռահաղորդակցական կապի այլ տեսակներ	30
63	Տեղեկատվական ծառայությունների մատուցում	
63.1	Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն, վեբ-պորտալների (վեբ-պատուհանների) հետ կապված գործողություններ	
63.11	Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն	
63.11.0	Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն	23
63.12	Վեբ-պորտալների (վեբ-պատուհանների) հետ կապված գործողություններ	
63.12.0	Վեբ-պորտալների (վեբ-պատուհանների) հետ կապված գործողություններ	23
63.9	Տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն	
63.91	Նորությունների գործակալություններ	
63.91.0	Նորությունների գործակալություններ	23
63.99	Տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	
63.99.0	Տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	23

75	Անասնաբուժական գործունեություն	
75.0	Անասնաբուժական գործունեություն	
75.00	Անասնաբուժական գործունեություն	
75.00.0	Անասնաբուժական գործունեություն	40
79	Ջրոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ	
79.1	Ջրոսաշրջային գործակալությունների և զբոսաշրջային օպերատորների գործունեություն	
79.11	Ջրոսաշրջային գործակալությունների գործունեություն	
79.11.0	Ջրոսաշրջային գործակալությունների գործունեություն	30
79.12	Ջրոսաշրջային օպերատորների գործունեություն	35
79.12.0	Ջրոսաշրջային օպերատորների գործունեություն	
79.9	Տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ	
79.90	Տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ	
79.90.1	Տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ	30
79.90.2	Ավիատոմսերի վաճառք իրականացնող գործակալությունների գործունեություն	26
85	Կրթություն	
85.1	Նախադպրոցական կրթություն	
85.10	Նախադպրոցական կրթություն	
85.10.0	Նախադպրոցական կրթություն	40
85.2	Տարրական կրթություն	
85.20	Տարրական կրթություն	
85.20.0	Տարրական կրթություն	40
85.3	Միջնակարգ և նախնական մասնագիտական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթություն	
85.31	Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթություն	
85.31.1	Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթություն (հիմնական դպրոց)	35
85.31.2	Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթություն (ավագ դպրոց)	35
85.32	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	
85.32.1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	35
85.32.2	Միջին մասնագիտական կրթություն	35
85.32.9	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական այլ կրթություն	35
85.4	Բարձրագույն և հետբուհական կրթություն	
85.41	Բարձրագույն կրթություն (ոչ լրիվ)	
85.41.0	Բարձրագույն մասնագիտական կրթություն (ոչ լրիվ)	40
85.42	Բարձրագույն և հետբուհական կրթություն	
85.42.1	Բարձրագույն մասնագիտական կրթություն	40
85.42.2	Հետբուհական մասնագիտական կրթություն	40

85.5	Այլ կրթություն	
85.51	Կրթական գործունեություն մարմնամարզության և սպորտի բնագավառում	
85.51.1	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում	40
85.51.2	Ռեզերվային և այլ արտադպրոցական դաստիարակություն	40
85.52	Կրթական գործունեություն մշակույթի բնագավառում	
85.52.0	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում	40
85.53	Վարորդական դպրոցների գործունեություն	40
85.53.1	Ավտոսիքերի վարորդական դպրոցների գործունեություն	40
85.53.9	Այլ վարորդական դպրոցների գործունեություն	40
85.59	Այլ կրթություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	40
85.59.1	Հաշվապահական դասընթացներ	40
85.59.2	Օտար լեզուների դասընթացներ	40
85.59.3	Համակարգչային դասընթացներ	40
85.59.4	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ	40
85.95.5	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ	40
85.59.9	Այլ կրթություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	40
85.6	Կրթության բնագավառում օժանդակ գործունեություն	
85.60	Կրթության բնագավառում օժանդակ գործունեություն	
85.60.0	Կրթության բնագավառում օժանդակ գործունեություն	33
96	Այլ անհատական ծառայությունների մատուցում	
96.0	Այլ անհատական ծառայությունների մատուցում	
96.01	Մանածագործական և մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում և չոր մաքրում	
96.01.0	Մանածագործական և մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում և չոր մաքրում	47
96.02	Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայություններ	
96.02.0	Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայություններ	40
96.03	Թաղումների կազմակերպում և դրա հետ կապված ծառայություններ	
96.03.0	Թաղումների կազմակերպում և դրա հետ կապված ծառայություններ	56
96.04	Ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեություն	
96.04.1	Բաղնիքների գործունեություն	40
96.04.2	Ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեություն	35
96.09	Այլ ծառայությունների մատուցում՝ չներառված ուրիշ խմբավորումներում	
96.09.0	Այլ ծառայությունների մատուցում՝ չներառված ուրիշ խմբավորումներում	47

9. Ոլորտային ռիսկի հետագա գնահատումը կատարվում է ինչպես նախնական

գնահատումը՝ ՏԳՏԴ-ով՝ արդեն իսկ առկա վիճակագրական տվյալների հիման վրա:

10. Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը ներդնելուց 3 տարի հետո, ունենալով հավաքագրված վիճակագրական տվյալներ, անհրաժեշտ է վերագնահատել ոլորտային ռիսկայնությունների միավորները՝ համաձայն ստորև ներկայացված մեթոդաբանության՝

1) քայլ 1. գնահատվում է գործունեության տեսակի առավելագույն վնասի ռիսկայնությունը՝ դրանով պայմանավորված կամ արձանագրված հիվանդությունների, թունավորումների և դրանց հետևանքների վիճակագրության: Որևէ տնտեսավարողի մոտ առավելագույն բացասական հետևանքներ ամրագրած վիճակագրական տվյալները համարվում են տվյալ գործունեության տեսակը բնութագրող տվյալներ և դրանցով է գնահատվում գործունեության տեսակը:

Աղյուսակ N 2. Ռիսկի գնահատում իրադարձության վնասի (հետևանքների) չափանիշներ

Աղետակի (վնաս, որը բերում է կործանման կամ ունենում է անդադնալի հետևանքներ)	6 հոգուց (սույն աղյուսակի սահմաններում թվերը ներառյալ) ավել անձանց մահացու դեպքեր
Համատարած (ճգնաժամային աղետ)	2-5 հոգու մահացու դեպք կամ 11 հոգուց ավելի անձանց երկարաժամկետ (15 օր և ավելին) անաշխատունակություն
Ծանր (ավերիչ աղետից վերականգնման համար անհրաժեշտ երկար ժամանակահատվածով)	Եզակի մահվան դեպք կամ 6-10 հոգու երկարաժամկետ անաշխատունակություն
Միջին (չափավոր աստիճանի ռեսուրսներ և ժամանակ պահանջող իրադարձություն)	Մինչև 5 հոգու երկարաժամկետ անաշխատունակություն կամ 6 հոգուց ավելի անձանց կարճաժամկետ (մինչև 15 օր) անաշխատունակություն
Թեթև (նվազագույն ազդեցություն)	Մինչև 5 հոգու կարճաժամկետ անաշխատունակություն կամ այլ առողջական թեթև խանգարումներ

2) քայլ 2. գնահատվում է գործունեության տեսակում տվյալ բացասական իրադարձության հաճախականության ռիսկայնությունը՝ դրանով պայմանավորված կամ արձանագրված հիվանդությունների, թունավորումների և դրանց հետևանքների վիճակագրության:

Աղյուսակ N 3. Ռիսկի գնահատում իրադարձության հաճախականության չափանիշներ

Գրեթե անխուսափելի	Տեղի է ունեցել անցած 12 ամսվա ընթացքում մի քանի անգամ
Շատ հնարավոր	Տեղի է ունեցել մի անգամ անցած 12 ամսվա ընթացքում
Հնարավոր	Նման դեպք տեղի է ունեցել անցած 3 տարվա ընթացքում
Հազվադեպ	Նման դեպք տեղի չի ունեցել անցած 3 տարվա ընթացքում
Գրեթե անհնար	Նման դեպք ընդհանրապես տեղի չի ունեցել

3) քայլ 3. համադրելով տեղի ունեցած իրադարձության առավելագույն բացասական հետևանքներն այդ հետևանքի դրսևորման հաճախականության հետ՝ ստանում ենք տվյալ գործունեության տեսակի ռիսկայնության միավորը: Իրադարձությունների վնասի (հետևանքների) չափանիշների և իրադարձության հաճախականության չափանիշների գնահատականի փոխհամակցվածությունը ներկայացված է N 4 աղյուսակում: Այն դեպքում, երբ տեսչությունը նույն գործունեության տեսակը գնահատելիս ստանում է վերջնական ռիսկի տարբեր արժեքներ, ապա որպես գործունեության տեսակի ռիսկի միավոր ընդունվում է առավելագույն արժեքը:

Աղյուսակ N 4. Ռիսկի գնահատում՝ իրադարձության ռիսկայնության գնահատում

		Աղետալի	Համատարած	Ծանր	Միջին	Թեթև
	Գրեթե անխուսափելի	100	90	80	60	50
	Շատ հնարավոր	90	80	70	50	40
	Հնարավոր	70	70	50	30	20
	Հազվադեպ	60	50	30	20	10
	Գրեթե անհնար	50	40	20	10	0

11. Անհատական ռիսկայնությունը ՊՀՀՏ-ի համար հաշվարկվում է ստուգաթերթերից՝ ստուգումների արդյունքում ստացված գնահատականների հիման վրա: Ստուգաթերթի հարցաշարում ընդգրկված յուրաքանչյուր վերահսկողական բնույթի հարց իր առջև ընդգրկում է նաև ռիսկայնության միավոր, որը հարցում ամրագրված պահանջը

խախտելու դեպքում հաշվի է առնվում, իսկ այդ խախտումներից ստացված միավորների գումարը կազմում է ստուգվող օբյեկտի անհատական ռիսկի միավորը:

12. Ստուգաթերթով գնահատված կազմակերպության ամենաբարձր միավորը կարող է լինել 50-ը:

13. Պարտադիր է նշել, որ ոչ բոլոր ոլորտներն է հնարավոր գնահատել՝ հիմնվելով միայն վիճակագրության վրա: Խոսքն այն ոլորտների մասին է, որոնց վերաբերյալ հնարավոր չէ հավաքագրել պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև այն ոլորտների, որտեղ անցանկալի իրադարձությունների տեղի ունենալու հավանականությունը ցածր է, իսկ ակնկալվող վնասի չափը աղետալի: Նման դեպքերում ոլորտային ռիսկայնության միավորը մնում է անփոփոխ և հաշվարկվում է համաձայն նախնական գնահատման արդյունքների:

IV. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

14. Ըստ ռիսկային միավորների նվազման հաջորդականության՝ տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են բարձր, միջին և ցածր խմբերի: Ընդ որում, բարձր ռիսկայնության խմբում ընդգրկվում են տնտեսավարողների վերին շեմի 20 տոկոսը, միջինում՝ 50 տոկոսը, իսկ ցածր ռիսկայնության խմբում՝ ներքևի շեմի 30 տոկոսը:

Աղյուսակ N 5. Ռիսկայնության խմբերի դասակարգում

Խումբ	Տոկոս
Բարձր	81-100
Միջին	31-80
Ցածր	0-30

Վ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԻՔԻԵՆԻԿ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

15. Ցանկանալով կարևորել առողջապահական կազմակերպություններում ռիսկի գնահատման գործընթացը ՊՀՀՏ-ի վերահսկման այլ ոլորտներից՝ մշակվեց ռիսկի գնահատման առանձին մեթոդաբանություն՝ նախատեսված բացառապես առողջապահական կազմակերպությունների համար (ՏԳՏԴ՝ հատված 86):

16. Ռիսկերի գնահատումն ըստ առողջապահական կազմակերպությունների տեսակների՝

1) ըստ առողջապահական կազմակերպության տեսակի՝ ռիսկի գնահատումը հիմնված է չորս տարբեր գործոնների վրա, որոնք տարբեր աստիճանի կարևորություն ունեն ռիսկերի գնահատման համար՝

ա. առողջապահական կազմակերպության տեսակը,

բ. աշխատողների թիվը,

գ. նախորդ տարում մատուցված ծառայությունների քանակը,

դ. մատուցվող ծառայությունների տեսակը:

17. Գնահատման գործոն 1. Առողջապահական կազմակերպության տեսակները

Ա. ռիսկն ըստ առողջապահական կազմակերպությունների տեսակների գնահատելու համար պետք է օգտագործել գնահատման հետևյալ համակարգը.

Միավորներ	Տեսակ
1	Դեղատնային կրպակ
2	Առաջնային բուժօգնության կետ, բժշկական կաբինետ (թերապևտիկ)
3	Գինեկոլոգի կաբինետ, ստոմատոլոգի(թերապևտիկ) կաբինետ,համեմատելի այլ կաբինետներ
4	Դեղատուն
5	Ամբուլատորիաներ, թերապիա, հոգեբուժական- թերապևտիկ
6	Ախտորոշիչ կենտրոն, լաբորատորիաներ, շտապ օգնության կայաններ
7	Պոլիկլինիկա, վերականգնողական կենտրոն, առողջարան
8	Բազմապրոֆիլ հիվանդանոց
9	Ծննդատուն, ռիսկային մասնագիտական հիվանդանոցներ (վիրաբուժական, օրթոպեդիկ, պլաստիկ վիրաբուժական)
10	Բուրգ բժշկական կենտրոն հիվանդանոցներ , բարձր ռիսկային մասնագիտացված

<p>հիվանդանոցներ (հակատուբերկուլյոզային, ինֆեկցիոն , մաշկավեներական, օնկոլոգիական, այրվածքների կենտրոն, հեմատոլոգիական , կարդիոլիբրարություն, հեմոդիալիզի կենտրոն</p>

Բ. ստացված միավորը բազմապատկվում է 2 գործակցով և դրա արդյունքում ստացվում է գործոն Ա-ի ռիսկի միավորը:

18. Գնահատման գործոն 2. Աշխատողների թիվը

Ա. որքան շատ աշխատողներ ունի առողջապահական կազմակերպությունը, այնքան ավելանում է նրա հնարավոր ռիսկի աստիճանը: Ռիսկայնությունն ըստ աշխատողների քանակի հաշվարկելու համար պետք է օգտագործել միավորների հետևյալ համակարգը՝

Միավորներ	Թիվ
1	0
2	1-3
3	4-7
4	8-20
5	21-50
6	51-100
7	101-250
8	251-500
9	501-1000
10	>1000

Բ. ստացված միավորը գործոն Բ-ի ռիսկի միավորն է:

19. Գնահատման գործոն 3. Մատուցվող ծառայությունների քանակը

Ա. որքան շատ է առողջապահական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների քանակը, այնքան ավելանում է նրա հնարավոր ռիսկը: Ռիսկն ըստ մատուցվող ծառայությունների քանակի հաշվարկելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ երկու պարամետրերը՝

ա. ըստ ստացիոնար հիվանդների բուժման օրերի (այցերի)

Միավորներ	N
1	0-200
2	201-500
3	501-1,000

4	1,001-2,000
5	2,001-5,000
6	5,001-10,000
7	10,001-20,000
8	20,001-50,000
9	50,001-100,000
10	>100,000

բ. ամբուլատոր բուժված հիվանդների

Միավորներ	N
1	0-200
2	201-500
3	501-1,000
4	1,001-2,000
5	2,001-5,000
6	5,001-10,000
7	10,001-20,000
8	20,001-50,000
9	50,001-100,000
10	>100,000

Բ. երկու աղյուսակներից ստացված միավորները պետք է գումարել իրար, ինչի արդյունքում կստանանք գործոն Գ-ի ռիսկի միավորը:

20. Գնահատման գործոն Դ. Մատուցվող ծառայությունների տեսակը

1) առողջապահական կազմակերպությունները իրենց գործունեությունը իրականացնում են և լիցենզիա են ստանում կոնկրետ գործունեության տեսակների համար, որոնք կարող են իրականացվել ինչպես առանձին կազմակերպություններում, այնպես էլ ստորաբաժանումներում, բաժիններում (բաժանմունքներում): Քանի որ տարբեր գործունեությունների տեսակները տարբեր ռիսկի մակարդակ են ենթադրում, ապա ամեն մի գործունեության տեսակ գնահատվում է համապատասխան ռիսկայնության բալերով: Ռիսկի միավորները հաշվարկվում են նշված յուրաքանչյուր գործունեության տեսակի համար:

NN ը/կ	Մասնագիտացված բժշկական օգնություն (գործառույթներ)	Կշռող գործակից
1.	Ներքին բժշկական (ընդհանուր թերապևտիկ)	2
2.	Մանկաբուժական	2

3.	Մանկաբարձական	3
4.	Գինեկոլոգիական	3
5.	Ընդհանուր վիրաբուժական	3
6.	Անեսթեզիոլոգիական	2
7.	Վերակենդանացման	3
8.	Նյարդաբանական	2
9.	Հոգեբուժական	1
10.	Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության	3
11.	Մաշկաբանական	3
12.	Վեներաբանական	3
13.	Ախտաբանաանատոմիական	3
14.	Դատաբժշկական փորձաքննություն	1
15.	Դատահոգեբուժական փորձաքննություն	1
16.	Լաբորատոր-ախտորոշիչ	3
17.	Ճառագայթային ախտորոշիչ	3
18.	Ֆիզիոթերապևտիկ	1
19.	Վերականգնողական	1
20.	Ֆունկցիոնալ ախտորոշիչ	2
21.	Ներզնական (էնդոսկոպիական)	3
22.	Ստոմատոլոգիական ընդհանուր պրակտիկա	3
23.	Ուռուցքաբանական	3
24.	Ալերգոլոգիական	2
25.	Անրնկալունաբանական	3
26.	Թոքաբանական	3
27.	Սրտաբանական	2
28.	Ինտերվենցիոն սրտաբանական	2
29.	Աղեստամոքսաբանական	2
30.	Երիկամաբանական	2
31.	Ռենմատոլոգիական	1
32.	Արյունաբանական	3
33.	Ներզատաբանական	2
34.	Տուբերկուլյոզային	3
35.	Վարակիչ հիվանդությունների	3
36.	Նեոնատոլոգիական	3
37.	Պերինատոլոգիական	2
38.	Ներզատագինեկոլոգիական	3
39.	Նյարդավիրաբուժական	3
40.	Քիթ-կոկորդ-ականջաբանական	3
41.	Ակնաբանական	2
42.	Կրծքային վիրաբուժական	3
43.	Սրտային վիրաբուժական	3
44.	Անոթային վիրաբուժական	3
45.	Որովայնային վիրաբուժական	3
46.	Ուրոլոգիական	3
47.	Պրոկտոլոգիական	3
48.	Վնասվածքաբանական	3
49.	Օրթոպեդիական	2
50.	Պլաստիկ վերակառուցողական և էսթետիկ վիրաբուժական	3

51.	Մանկական վիրաբուժական	3
52.	Միկրովիրաբուժական	3
53.	Դինաժնոտային վիրաբուժական	3
54.	Ներզննական վիրաբուժական	3
55.	Նորածնային վիրաբուժական	3
56.	Անոթանեյրովիրաբուժական	3
57.	Ներզատավիրաբուժական	3
58.	Այրվածքաբանական	3
59.	Փոխներարկումային(տրանսֆուզիոլոգիական, պերֆուզիոլոգիական)	3
60.	Թունաբանական	3
61.	Հոգեթերապևտիկ	2
62.	Թմրաբանական	1
63.	Սեռախտաբանական (սեքսապաթոլոգիական)	3
64.	Կոսմետոլոգիական	3
65.	Բժշկական գենետիկական	2
66.	Հերիատրիական	1
67.	Սպորտային բժշկական	1
68.	Ավիացիոն բժշկական	1
69.	Թերապևտիկ ստոմատոլոգիական	3
70.	Վիրաբուժական ստոմատոլոգիական	3
71.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիական	3
72.	Օրթոդոնտիկ ստոմատոլոգիական	3
73.	Ատամնատեխնիկական	2
74.	Դիետաբանական (դիետոլոգիական)	1
75.	Ներարտադրողաբանական (ոեպրոդուկտոլոգիական)	2
76.	Հեմոդիալիզային	3
77.	Կլինիկական դեղորայքային	2
78.	Կլինիկական դեղաբանական	2
79.	Հոմեոպաթիկ	1
80.	Բժշկական-օպտիկական	1
81.	Պալիատիվ	1
82.	Մանրէագերծում	3
83.	Խոհանոց	3
84.	Լվացքատուն	2
85.	Տեխնիկական ծառայություններ	3

2) բոլոր հաշվարկված կշռող գործակիցները գումարվում են: Ընդհանուր գումարը օգտագործվում է վերջնական դիսկի միավորները հաշվարկելու համար, ինչի համար պետք է օգտագործել հետևյալ գնահատման (միավորների) համակարգը.

Միավորներ	Ընդհանուր կշիռ
1	0-9
2	10-19
3	20-29

4	30-39
5	40-49
6	50-69
7	70-89
8	90-119
9	120-150
10	>150

3) ստացված միավորը բազմապատկվում է 5 գործակցով և դրա արդյունքում կստանանք գործոն Գ-ի ռիսկի միավորը:

21. Ոլորտային ռիսկի աստիճանը հաշվարկելու համար գումարվում են չորս գործոնների միավորները (առողջապահական կազմակերպության տեսակը, աշխատողների թիվը, նախորդ տարում մատուցված ծառայությունների քանակը, մատուցվող ծառայությունների տեսակը): Ոլորտային ռիսկի առավելագույն արժեքը 100 միավորն է:

22. Առողջապահական կազմակերպությունների անհատական ռիսկայնության գնահատումը՝ ըստ տեսչական ստուգումների արդյունքների՝

1) առողջապահական կազմակերպության անհատական ռիսկայնության աստիճանը հաշվարկվում է լրացված ստուգաթերթիկի արդյունքների հիման վրա՝ տեսչական ստուգումը ավարտելուց հետո: Մինչև լրացված ստուգաթերթի առկայությունը, առաջնորդվում են կանխարգելման սկզբունքով և ենթադրում, որ անհատական ռիսկայնությունը բարձր է:

23. Առողջապահական կազմակերպությունների ստուգաթերթում ընդգրկվում են որոշիչ հարցեր (հատուկ ընդգծված և Ո տառով նշված հարցեր): Որոշիչ հարցերը ընդգրկում են ամբողջ բաժնում ներառված բոլոր հարցերը կամ հիվանդների համար անմիջական ռիսկ ներկայացնող հարցերը: Ամբողջ բաժնին վերաբերվող որոշիչ հարցերի օրինակներն են՝

1) թափոնների հավաքման և մշակման ստանդարտները համապատասխանում են սանիտարական կանոնների պահանջներին.

2) վարակի հսկողության հանձնաժողովը ստեղծված է սանիտարական կանոնների համապատասխան և օժտված է անհրաժեշտ գործառնություններով:

24. Հատուկ ռիսկերին վերաբերվող որոշիչ հարցերի օրինակներն են՝

1) ջրի որակը համապատասխանում է սանիտարական կանոնների պահանջներին և ջուրը անվտանգ է օգտագործման համար.

2) մանրէազերծան գործընթացը երաշխավորում է բժշկական սարքերի ապահով վարակազերծում:

25. Այն դեպքում, երբ որոշիչ հարցերին տրվել է բացասական պատասխան (օրինակ՝ ջրի որակը անվտանգ չէ հիվանդի համար), տվյալ բաժանմունքի (բաժնի) համար պետք է ենթադրել ռիսկի ամենաբարձր աստիճանը: Եթե բաժանմունքը կամ բաժինը գնահատվում է որպես խիստ վտանգավոր, ապա ամբողջ հատվածը պետք է դասակարգվի որպես ամենաբարձր ռիսկեր պարունակող (օրինակ՝ վտանգավոր ջրամատակարարման արդյունքում օժանդակ ծառայությունների ամբողջ հատվածը կգնահատվի որպես ամենաբարձր ռիսկայնություն ունեցող):

26. Առողջապահական կազմակերպության անհատական ռիսկը նույնպես հիմնվում է ռիսկի միավորների համակարգի վրա: Ամեն մի բաժնի (բաժանմունքի) համար գոյություն ունի մի քանի հարցերից բաղկացած ստուգաթերթ: Քանի որ տարբեր հարցերը տարբեր ռիսկի մակարդակ են ենթադրում, ապա ամեն մի հարցն ստացել է համապատասխան ռիսկայնության կշիռ (1-ից = ցածր ռիսկ մինչև 3-ը = բարձր ռիսկ): Օրինակ. «Մաքրում» բաժանմունքի հարցեր.

NN ը/կ	Հարց	Կշիռ
Ընդհանուր մաքրություն		
1.	Մաքրման իրերի համար համապատասխան տարածք է նախատեսված, որը մաքուր է և գտնվում է լավ վիճակում	2
2.	Առկա է ազգային գույնային կոդերի վերաբերյալ տեղեկատվությունը	2

3.	Մաքրման իրերը կողավորված են գույնային կողերով	3
4.	Հատակը լվանալու ձողերը կախված են պատի կախիչների վրա, իսկ դույլերը տեղադրված են նախատեված տեղերում	1
5.	Հատակը լվանալու ձողերի մաքրող մասն ամեն օր լվացվում է, հակառակ դեպքում նկարագրեք օգտագործելու ձևը	2
6.	Հատակը լվանալու ձողերի մաքրող մասն արյան կամ մարմնի հեղուկի մնացորդների մաքրման համար օգտագործելու դեպքում դուրս է նետվում	3
7.	Մաքրման իրերը մաքուր են, լավ պահպանված են և պաշտպանվում են աղտոտումից	2
8.	Հատակը լվանալու ձողերը չեն թողնվում հատակի վրա կամ աղտոտման համար նպաստավոր այլ տեղերում օրինակ՝ կախվում են ավտոտնակի պատի վրա	1
9.	Հատակը լվանալու մեքենաները մաքուր են և չոր	2
Ընդամենը		18

27. Անհատական ռիսկը գնահատելու համար պետք է հաշվարկել համապատասխանության աստիճանը: Այդ նպատակով «Այո» պատասխան ստացած բոլոր հարցերի կշիռները գումարվում են և բաժանվում են առավելագույն հնարավոր կշիռն՝ օգտագործելով հետևյալ բանաձևը. («Այո» պատասխան ստացած բոլոր հարցերի կշիռների համագումարը (առավելագույն հնարավոր կշիռը) *100 = համապատասխանության %: Օրինակ՝ ստուգվել են մաքրության ծառայության վերը նշված 10 հարցերը (չափանիշները): Այդ հարցերից 1-8 հարցերին պատասխանվել է «Այո», իսկ 9-րդ և 10-րդ հարցերին պատասխանվել է «Ոչ»: Հետևաբար, ընդհանուր կշիռը 15 է, առավելագույն հնարավոր կշիռը՝ 18: Համապատասխանության մակարդակը կլինի 83.33%: Համապատասխանության մակարդակը գնահատելու համար, պետք է օգտագործել հետևյալ սանդղակը.

Տոկոս	Համապատասխանության մակարդակ	Միավորներ
95-100	Գերազանց	1
90-94,9	Լավ	2
80-89,9	Բավարար	3
70-79,9	Առկա են խնդիրներ	4
60-69,9	Առկա են լուրջ խնդիրներ	5
0-59,9	Բացակայում է հսկողությունը	6

Օրինակ մեր դեպքում (մաքրության ծառայություն) միավորը հավասար է 3:

28. Ռիսկի գնահատման մեջ տարբեր բաժինների (բաժանմունքների) տարբեր ռիսկեր են պարունակում: Այդ ռիսկերը հաշվարկելու համար օգտագործվում է գնահատման (կշռման) համակարգը՝ հետևյալ կշռող գործակիցներով.

- 1) 3 – բարձր ռիսկայնության բաժին (բաժանմունք).
- 2) 2 – միջին ռիսկայնության բաժին (բաժանմունք).
- 3) 1 – ցածր ռիսկայնության բաժին (բաժանմունք).
- 4) ստորև ներկայացված են կշռող գործակիցները՝ օժանդակ բաժինների համար.

NN ը/կ	Բաժին (բաժանմունք)	Կշռող գործակից
1.	Կլինիկական բիոքիմիայի լաբորատորիա	2
2.	Կլինիկական միկրոկենսաբանության լաբորատորիա	3
3.	Հեմատոլոգիա	2
4.	Մաքրում	3
5.	Խոհանոց	3
6.	Լվացքատուն	2
7.	Ախտաբանաանատոմիական	3
8.	Մանրէազերծում	3
9.	Տեխնիկական բաժանմունք	2

29. Հատվածի վերջնական ռիսկի գնահատման համար, յուրաքանչյուր բաժանմունքի համար ստացված միավորը բազմապատկվում է գործակցով: Գումարվում են գնահատված բոլոր բաժանմունքների արդյունքները և բաժանվում այն գնահատող բաժանմունքի գործակիցների գումարի վրա: Օրինակ, գնահատվել են երեք բաժանմունք՝ բիոքիմիայի լաբորատորիան, խոհանոցը և լվացքատունը: Գնահատման արդյունքներն են՝

- 1) բիոքիմիայի լաբորատորիա՝ գերազանց (1)
- 2) խոհանոց՝ բավարար (3)
- 3) լվացքատուն՝ գերազանց (1)

Արդյունքում.

NN ը/կ	Բաժին (բաժանմունք)	Կշռող գործակից	Միավոր	Արդյունք
-----------	--------------------	-------------------	--------	----------

1.	Կլինիկական բիոքիմիայի լաբորատորիա	2	1	2
2.	Խոհանոց	3	3	9
3.	Լվացքատուն	2	1	2
Ընդհանուրը		7	Ընդամենը	13

Ընդամենը արդյունքի բաժանումը (13) ընդհանուր կշռող գործակիցների գումարի (7) վրա տալիս է օժանդակ ծառայությունների հատվածի արդյունքը՝ 1,85 ռիսկի գործոն:

30. Օժանդակ ծառայությունների հատվածի նման գնահատում, արժևորվում և հաշվարկում է բժշկական հատվածի միավորը՝ 26 կետում նշված սանդղակով:

31. Վերջնական միավորի համար պետք է գումարել բժշկական հատվածի և օժանդակ հատվածի միավորները և ստացված գումարը բազմապատկել 8.33 գործոնով: Վերջնական արդյունքը կլինի տվյալ առողջապահական հիմնարկի ռիսկի գնահատականը, որը կլինի 0-100 միջակայքում:

32. Վերը նշված հաշվարկների արդյունքում առողջապահական կազմակերպությունների ռիսկը գնահատվում է առավել անաչառ և լիարժեք: Միաժամանակ հնարավոր անճշտությունները բացատրելու և հաշվարկները անսխալ իրականացնելու համար անհրաժեշտ է ՊՀՀՏ-ն ապահովել համապատասխան համակարգչային ծրագրային փաթեթով:

VI. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ

33. Տվյալների բազայի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ առանց ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հնարավոր չէ իրականացնել ռիսկերի գնահատում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ՊՀՀՏ-ին ապահովել իրեն անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու հնարավորությամբ բոլոր այն մարմիններից, որոնք տիրապետում են նման տեղեկատվությանը:

34. Տվյալների բազաները բաղկացած են ծրագրային ապահովման վրա հիմնված «բաղադրիչներից», որոնք կառուցված են տեղեկություններ հավաքելու և պահելու համար, այնպես, որ օգտագործողը կարողանա որոնել, ավելացնել, թարմացնել կամ հեռացնել (ջնջել) այդ տեղեկությունները: Տվյալների բազան պետք է հնարավորություն ընձեռի ապագայում միանալու ազգային տվյալների պլանավորվող ծրագրին:

35. Տվյալների բազայի կառուցվածքը աղյուսակային է, բաղկացած է տեղեկատվական տողերից և սյունակներից: Տվյալների բազան դասավորված է ըստ դաշտերի, գրառումների և ֆայլերի: Դաշտը տեղեկության մեկ կտոր է, գրառումը՝ դաշտերի ամբողջական համալիր, ֆայլը՝ գրառումների հավաքածու:

36. ՊՀՀՏ-ում ձևավորվում է տվյալների բազա՝ ըստ ՊՀՀՏ-ի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների: Տվյալների բազան ներառում է նաև ստուգաթերթերում ներառված յուրաքանչյուր ստուգման ենթակա կազմակերպությունում գրանցված հիվանդությունների և թունավորումների վերաբերյալ տվյալները:

37. Նպատակ՝

1) տվյալների բազայի նպատակն է՝

ա. աջակցել տեսուչներին որոշումներ կայացնելու գործընթացում և ապահովել այդ որոշումների հիմնավորվածությունը,

բ. ստանալ վերահսկման օբյեկտի ռիսկի դասակարգման և ստուգումների հաճախականության վրա ազդող միտումները:

38. Տվյալների բազայի կառուցվածքը

1) ՊՀՀՏ-ի նպատակներից ելնելով՝ ստեղծվում է տեսչության կողմից վերահսկվող բոլոր սուբյեկտների գրանցամատյան (ռեգիստր): Ռեգիստրում գրանցվում են հետևյալ տվյալները՝

ա. պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության ռեգիստրում տնտեսավարող սուբյեկտի գրանցման համարը,

բ. տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ՝ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումն ու կազմակերպական-իրավական ձևը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված և այլն),

գ. պետական գրանցման կամ պետական հաշվառման տարին, ամիսը, ամսաթիվը,

դ. պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը կամ վկայականի սերիան և համարը,

ե. տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը,

զ. տնտեսավարող սուբյեկտի գործունեության վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսի համար և կապի այլ միջոցներ),

է. տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն) այդ թվում՝ հեռախոսը և կապի այլ միջոցներ,

ը. տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները,

թ. տնտեսավարող սուբյեկտների և նրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսի համար և կապի այլ միջոցներ),

ժ. լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու դեպքում տեղեկություններ լիցենզիայի մասին,

ժա. տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունն սկսելու ամսաթիվը,

ժբ. տնտեսավարող սուբյեկտների օբյեկտների կառուցման (վերջին վերակառուցման ամսաթիվը),

ժգ. տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների քանակը,

ժդ. հիվանդությունների և թունավորումների դեպքերը.

2) ՊՀՀՏ-ում տնտեսավարող սուբյեկտների ռեզիստր ստեղծելուց հետո հավաքագրվում է հատուկ տեղեկատվություն՝ դիսկի վրա հիմնված ստուգման նպատակներ ապահովելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ